



Ազատութիւն

Կ Ի Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Circulation
larger than
any other
Armenian paper
in the U. S.

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒՆ 53

ՆԻՒ ԵՈՐԲ, 1892, ԱՊՐԻԼ 30

ԳԻՆ ՀԻՆԳ ՍԵՆՏ

Բ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍ
ՀԱՅ ԳԱՂԱՍԿԱՆ ՈՒԹԵԱՆ
ԵՒ

Ա. ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հ. Հ. Մ. Ն. Ե. Օ.

ԸՆԴ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ
ԱՐԺ-Ց-Վ-ՍԱՐԱՃԵԱՆԻ

Ողբերգութիւն

ՎԱՅԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ

Յերիս արարս

Կատակերգութիւն

ԵՐԻՑ ՔԱՂԱՑ

Մէկ արար

Կարգադիր Մասնախումբն պատիւ ունի ծանուցանել Հայ Հասարակութեան թէ այս թատերական ներկայացումն ու մեծ հանդէսն որ տեղի պիտի ունենայ, 1892 Ապրիլ 30, Շաբաթ երեկոյ, ժամ 8,

Ի ՊՅԶԻՄԻՆ ՆԵՇԵՐԸԸ 201

Bohemian National Hall,

533 5th St. N. Y. Del. A & B, Ave's

Ի յիշատակ Վարդանանց նահատակութեան՝ պիտի լինի իւր տեսակին մէջ առաջինն և ամէնէն փառաւորն։ Այն մեծ սրահը ուր տեղի պիտի ունենայ հանդէսն, վարձու առնուած ընտիր հազուատներն և դերասանաց վարժ լինելն արդարեւ գրուական են այս մասին։

Մասնախումբն հարկ տեսած է նաեւ թատերական ներկայացումը լրանալէ վերջ թողադերել հանդիսականներն պարել սըրազին մէջ նուագածուաց առաջնորդութեամբ։

Պարը կսկսի ներկայացումը վերջանալէ կէս ժամ յետոյ։

Նուագարանը պիտի նուագուին Փրօֆէսոր Մ. Ա. Կեարամէլի և անոր ընկերաց կողմանէ։

Արեւելեան նուագարաններ չի պիտի լինին այս անգամ։

Հարկ է ծանուցանել նաեւ թէ կազմուած են չորս պատուներու համար մեծ հոգ տարուած է, նըմանապէս Ա. և Բ. կարգի տոմս ունեցողներու համար «Հէթ չէքը» ձրի կլինի, այսինքն այս կարգերն նստող անձանց գլխարկներն կամ հովանոցներն ևն. պիտի պահուին առանձին տեղ մը կարգադիր մասնախումբի կողմէ։

Ա. և Բ. կարգի տոմսերու համար մասնաւոր նստարաններ կան թիւերու վրայ շարուած, իսկ Գ. կարգի տոմս ունեցողներն կարգաւ պիտի բռնեն իրենց տեղերն

առանց մասնաւոր աթոռներ ունենալու։

Մանուկներու համար մուտքը ճրի է, եթէ սոքա ընկերացած լինին իրենց ծնողաց կամ խնամակալաց հետ։

Հարկ է նաեւ տպաւորել հասարակութեան մտքի վրայ սա ճշմարտութիւնն թէ սրահին դռներն պիտի բացուին ժամը 7 ու կէսին, իսկ վարագոյրն պիտի բացուի ծին անհրաժեշտ, զի սրահն որդեակ ժամանակի համար վարձուած է միայն։

Մինչ վերջի օրն տոմս չի գընող անձինք պիտի կրնան տոմս գնել «պաքս օֆիսին» որ պիտի բացուի ժամը 7 ու կէսին ճիշդ։

Դիւրութեամբ հանդիսատեսին հասնելու լաւագոյն ճանապարհներն են հետեւեալները։

Պրուքլինէ եկողներուն համար «Պուլ քար» կառքը որ Սիթի Հօլին կենէ և կամուրջի առջևէն անցնելով կերթայ Ալէքսի Բ. Ուէսթ Նիւ Եօքքէ եկողներուն համար, «Լիքն քար» կառքը, որ Ուէսթ 42րդ փողոցէն կենէ և Ալէքսի Բ. էն կանցնի։ Հոպլընէ եկողներուն համար «Բրօս Թաուն քար» կառքերն որք քրիսթմֆըր փողոցէն կենեն ու կուգան դէպ Արեւելք։

Նմանապէս առաջին և երկրորդ Ալէքսիներու կառքերն ու երրորդ և երկրորդ Ալէքսիներու երկաթուղիներն դիւրին ճամբաներ են Ափ թաունէ եկողներու համար։

Տոմսերն կարելի է ընդունիլ Գործադիր Մասնախումբի անդամներէն և կամ

- Լրագրոյս խմբագրութենէն,
- Տ. Տաղլեանէ, 779 2րդ ալիւի.
- Տ. Յ. Յովսէփեանէ, 43 Սէնթ ըսթրիթ, Պրուքլին,
- Տ. Ալեքսեանէ, 432 Ուէսթ, 56րդ փողոց Ն. Ե.
- Պ. Յ. Չուլճեանէ, Բօլթ փողոց
- Տ. Պ. Չանկլեանէ, 455 Փալիսթ ալիւի, ձէրգի Սիթի,
- Տ. Յ. Չուլճեանէ, Փաթըրսըն

Ծան. — Լսելով որ ոմանք ժողովրդի մէջ լուր արածած են թէ սա թատերական ներկայացումն ուրիշ անգամներ տեղի ունեցածներուն նման հասարակ բան մը պիտի լինի, և ոչ այդչափ կարեւորութիւն տալու արժանի ևն. հարկ կը համարի մասնախումբն ծանուցանել թէ այդ կարգի զրոյցներն անհիմն են բոլորովին, զի պատրաստութիւնը, վարձուած թատրոնն, նուագարաններն և այլն ցոյց կուտան այժմէն թէ կարծուածին պէս հասարակ բան մը չէ այս որպէս այն ներկայացումներն որք տեղի ունեցան յանցելու։

Ի դիմաց կարգադիր մասնախումբի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԵՐՋԻ ՆԻՍՏԸ

Հայկական Միութեան վերջի կանոնաւոր նիստը տեղի ունեցաւ Ապրիլ 16ի երեկոյն միեւնոյն ժողովարարի մէջ ուր կատարուեցաւ Միութեան տարեգարձի հանդէսն քանի մը շաբաթներ առաջ։ Ներկայից թիւն 40է աւելի էր այդ երեկոյ, որոց մէջ մեծ տեղ մը կը բռնէին այցելուք։ Ատենական գործողութիւններէ և այլ քանի մը խնդիրներէ վերջ նոյն երեկոյեան Ատենաբանն, Տ. Սարգիսեան հրաւիրուեցաւ խօսելու համար։ Ատենաբան պարոնն նիւթ ունէր իրեն քաղաքավարութիւնն, որոյ նկատմամբ ճառեց իբր երեք քառորդ ժամ։

Յետ այս ատենախօսութեան Տքթ. Գարրիէլեան կամ կապրիէլ ապագայ ատենախօսներու վրայ խօսած ատեն դիտել տուաւ թէ Միութեան յառաջիկայ նիստի երեկոյն (Ապրիլ 30) ոմանք երիտասարդք թատերական ներկայացում մը պիտի տային, և վախճանով որ մի գուցէ անգամը խառնուելով հոն երթային այդ երեկոյ, խնդիր յարոյց թէ ի՞նչ ընելու էր Հայկական Միութեան յաջորդ նիստին չի խորանելու համար։ Ատենապետն այս խնդիրն վիճաբանութեան ենթարկելէ առաջ ներկայացուց ժողովրդեան 20 մտից տոմսեր և կարգաց նամակ մը որ եկած էր թատերական ներկայացման կարգադիր մասնախումբէն, և թելադրեց ըսելով թէ Միութիւնն արգար գործ մը ըրած պիտի լինէր եթէ Ապրիլ 30ի երեկոյն փակէր իւր նիստն ու երթար քաղաքէն իւր թատերական ներկայացումն։ Տքթ. Տատրեան խօսք առնելով համակերպեցաւ այս դաղափարին և առաջարկեց նոյնն, պայմանաւ որ եթէ դաղթականական ժողովն ասիէ վերջ ուրիշ անգամ մ'ալ Հայկական Միութեան կանոնաւոր նիստերու երեկոյն մի հանդէս կամ ներկայացում տայ, Հայկական Միութիւնն անտարբեր մնայ անոր։ Պ. Տիոնեան հարկ զգաց այս առթիւ բացատրել թէ կարգադիր մասնախումբն ոչ թէ դիմումը Ապրիլ 30ը ընտրած էր այս ներկայացումը տալու համար այլ մինչև Յուլիս թատերասրահն բացի Ապրիլ 30է ուրիշ ամէն շաբաթ երեկոյններն բռնուած լինելուն պատճառաւ ստիպուած էր Ապրիլ 30ը ընտրել՝ այդ ալ իբր չորս ամիսներ առաջ։ Տքթ. Գարրիէլեան, կամ կապրիէլ խօսք առաւ այս անգամ և Ազատութիւնի վերջի թիւերէն հատ մը ձեռք բռնած իւր բոլոր գործութեամբ ջանաց պաշտպանել դատ մը որ անարդար էր բոլորովին։ Սա կարգաց նախ Ազատութիւնի մէջ Հայ-

կական Միութեան տարեգարձի նըկարագրութեան այն մասն որ իւր մեծապատիւ անձին կը վերաբերէր և զայրացած իրեն դէմ եղող ամենաթեթեւ ակնարկութեան մը համար անիծել և հայհոյել ըսկըսեց Ազատութիւնի խմբագրին դէմ որ դժբաղդաբար կամ բարեբաղդաբար ներկայ էր այդ երեկոյ։ Տքթ. Կապրիէլ ի հարկէ ուրիշ կերպիւ չէր կրնար պաշտպանել իւր անձը, զի անիւրաւ և անարդար մարդու փաստերն հայհոյութիւններ են միայն ու կանացի անվերջ անէծքներ։ Սա մարդ բաւական խօսելէ վերջ Ազատութիւնն նկատելով պաշտօնական բերանն Հայ դաղթականութեան կամ թատերական ներկայացումն տուող խմբիւն և դիտել տալով թէ ատոր խմբագիրն այդ խմբին պատկանող մի անձ է, ուստի առաջարկեց որ թատրոնի տոմսերն ետ դրուին, և հրաւիրեց Հայկական Միութեան անդամներն ըսելով թէ, «Եղբայրներ, եթէ մարդ ձեռքերնիդ վեր առէք ինձ հետ և ուստ ըրէք հոս գալ Ապրիլ 30ի երեկոյն Հայկական Միութեան նիստն շարունակելու համար»։ Բընականաբար Տքթ. Կապրիէլ վերջ խօսք առաւ Ազատութիւնի խմբագիրն որ ըսաւ ի մէջ այլոց թէ «Քիչ մ'առաջ երբ Տ. Սարգիսեան քաղաքավարութեան վրայ կը խօսէր, ես ինքնիմեան կըսէի թէ սա քանի՞ երրորդ անգամն է որ քաղաքավարութեան վրայ կը խօսէք այս ժողովի մէջ, բայց հիմայ կը տեսնեմ որ Պ. Սարգիսեան շատ լաւ ընտրութիւն մ'ըրած էր արդարեւ, և բացի աստի կրնամ խոստովանիլ թէ մեր ամէն նիստերու մէջ պէտք ունինք քաղաքավարութեան վրայ խօսող ատենաբաններու, զի մեր գործադիր ժողովոյ պետն անգամ քաղաքավարութեան ղեկի է բոլորովին»։ Ատենաբանն բացատրեց նաեւ այն օգուտներն որք կրնային առաջ գալ այդ նամակէն ու տոմսերէն որք պիտի կրնային սիրոյ կապ մը լինիլ երկու բաժանեալ ընկերութեանց մէջ, և ցոյց տուաւ այն պատճառներն որք կրնային դրդել մէկը այդպիսի բարեկամական և ազգային կապ մը խզելու փորձն փորձելու համար։ Ըսաւ նաեւ թէ Ազատութիւնն ո՛ր և է խմբի օրականն չէ, այլ մի անկախ լրագիր է իւր գրածներուն պատասխանատու, և թէ Հայկական Միութիւնն պէտք չէ որ Ազատութիւնն պատճառ բռնելով սխալ քայլ մ'առնէ այդ առթիւ։ Հայկական Միութիւնն պարտի իւր հաշիւն Ազատութիւնի հետ մաքրել և ոչ դաղթականական Միութեան կամ Հ. Հ. Մ. Օթեակին։

Իսկ Տքթ. Կապրիէլ կանաչի անէծքներուն ու հայհոյու-

թեանց գալով Ազատութիւնի խմբագրին ըսաւ թէ քաղութիւնն չէ հայհոյել, և այնպիսի փոքր ժողովոյ մը առջև արդարանալու նպատակաւ ինչ ինչ բացատրութիւններ տալ. եթէ պատուաւոր և ճշմարիտ մարդ է մեր հակառակորդն թող հրապարակաւ պաշտպանէ իւր պատիւն ու պատասխանէ իրեն դէմ եղած շատ մը ծանրագոյն բայց իրաւացի ամբաստանութեանց։

Հ. Էկինեան վերջ թեր ու դէմ խօսեցան նաեւ ուրիշներ և վերջապէս խնդիրն քուէի դրուելով Տքթ. Կապրիէլի առաջարկն մերժուեցաւ քուէից բացարձակ առաւելութեամբ և որոշուեցաւ Ապրիլ 30ի երեկոյն փակել Հայկական Միութեան նիստն ու երթալ քաղաքէն Հայ դաղթականութեան և Հ. Հ. Մ. Օթեակին հանդէսն ու թատերական ներկայացումն։

Այս որոշումէ յետոյ Պ. Յակոբեան խօսք առաւ և ցաւ յայտարարեց որ Ազատութիւնի խմբագիրն Հայկական Միութեան մէկ անդամն իսկ լինելով աղէկ գրած չէր անոր դարեդարձի հանդիսի մասին, և մանաւանդ քննադատած էր Տքթ. Գարրիէլեանի մասն որ ամենէն սքանչելին եղաւ ևն։ Պ. Յակոբեան քանի մը ակնարկութիւններ ընելէ վերջ առաջարկեց որ հերքում մը գրուի Ազատութիւնի գրածներուն դէմ։

Այս մասին խօսեցան նաեւ Տիարք Հիւրմիւղեան, Տիոնեան, Էկինեան, Տքթ. Արշակունի, Կապրիէլ և այլք և հուսկ ուրեմն յանձնախումբ մը կազմուեցաւ և պաշտօն տրուեցաւ անոր մի հերքում գրելով յղել զայն Հ. Էկինեանի ի հրատարակութիւն։

Գիշերն տարածամած էր երբ ատենան փակուեցաւ ու ժողովուրդն մեկնիլ սկսեց վիճաբանելով ինչ ինչ երկրորդական կէտերու վրայ։

ԵՐԳԵՐ ԿՈՒՉՈՒԻՆ

Մեր հրատարակած Ազգային երգարանին մէջ նպատակ ունենալով զնեւ կարգ մը չի հրատարակուած ազգային երգեր ու բանաստեղծութիւններ պատիւ ունինք ներկայիւս յայտարարել արդոյ հասարակութեան թէ սիրով պիտի ընդունինք մեզ զրկուած ամէն երգեր ու բանաստեղծութիւններ՝ հրատարակելու համար այս ընդարձակ երգարանին մէջ։

Առանց երգ մը տեսնելու և քննելու հրատարակութիւնն չենք ապահովեր։

Հայաստան

ԿԻՍՍԱՄԱՆԱԾ
ԱՅՐԱՅԻՆ ԻՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ .

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ
ԱՄՍՈՅՆ 15 ԻՆ ԵՒ 30 ԻՆ

ԽՈՐԱԳԻՐ—ՏՈՐԻՆ
ՀԱՅԿԱԿ Ե . ԷԿԻՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն երկրի համար
Տարեկան ՄԻԿ ԵՈՒՐ

Ո՛ր է ծրար կամ գրութիւն
աղղել Հետեւեալ հասցէին
TO THE AZADOUTIAN,
438 Pearl St.
New York City, U. S. A.

Azadoutian,
LIBERTY.

Published Twice a month
By
Azadoutian Publishing Company
438 Pearl St.,
NEW YORK CITY.

H. EQUINIAN,
Editor.

SUBSCRIPTION PRICE, free of postage, \$1.00 a year
Entered at the New York Post Office as
second class mail matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, 1892 Ապրիլ 30

Ա. Զ. Դ.

Եկինեան կազմատունն այս
շաբթու կը փոխադրուի ի թիւ
438 Փըրլ շտրիթ՝ իւր այժմեան
տեղի անձկութեան պատճառաւ :
Բնականաբար ԱԶԱՏՈՒԹԻՒՆ իւր
պարանն ու խմբագրատունն եւս
պիտի Հետեւին կազմատան : Ուս-
տի կը խնդրուի մեր բաժանորդ-
ներէ ու բարեկամներէ այսուհե-
տեւ նամակ կամ ծրար ղրկել ի
վերեւ նշանակեալ հասցէին :

Ճշմարտութիւնն սիրողին ու
խօսողին համար այս աշխարհն
միշտ նեղ է :

Ուղիղն ըսող մարդիկ թշնա-
միներով պաշարուած են միշտ .
այն որ ճշմարտութիւնն կը խօսի
կամ կը գրէ պարտի ի սկզբանէ
գիտցած լինել թէ կեանքի մէջ փը-
շալից ճամբայ մը ունի քալելիք :

Ամէն ճշմարտութիւն խօսող
մարդ անկեղծ չի կրնար ըլլալ . նա
որ միշտ հարուստին և հզօրին
համար ի նպաստ կը խօսի ճշմար-
տախօս լինելու քողին տակ , սը-
տախօս չղոյճորդներու պարագը-
լուին կրնայ սեպուիլ :

Ուղիղ մարդը որ ճշմարտու-
թիւնն կը սիրէ պարտի աչքի առ-
ջեւ առնել շատերու ատելի լինել ,
ղի ճշմարտախօսն ստիպեալէ չա-
տերու գագաթնէ դալիլ իւր պաշ-
տօնն խղճի մտօք կատարած լի-
նելու համար , և ստիպուած է նը-
մանապէս թշնամիներու բանակ-
ներ ունենալ իւր առջեւ : Բայց
ճշմարտութիւնն սիրող մարդու
մը մի միակ բարեկամն չառաւելի
յարգելին է այն սովորական բարե-
կամներէն որոց սէրն քսակի և դը-
րամի հետ միայն կապուած կը
լինի :

Հայկական Միութիւնն իւր
վերջի նիստին մէջ ցոյց տուաւ
վերջապէս թէ ինքն չի կրնար
կատարած զբաղմունքի մը կրից
երթալ՝ ատելութիւն ու հակա-
ռակութիւն սերմանելով ժողովըր-
դի ամէն դասերուն մէջ : Տքթ .
Կապիթէլ անուն անձի երեսին զար-
կաւ անոր տմարդութիւնն ու խո-
չընդոտներ յարուցանելու գէշ
բնաւորութիւն քուէից բացարձակ
առաւելութեամբ , և որոշեց ի պա-
տիւ Հայ գաղթականութեան հան-
դիսին և Հ. Հ. Մ. Ն. Օթեակին
տուած թատերական ներկայաց-
ման՝ Ապրիլ 30ի երեկոյնի փակել
իւր նիստն՝ Հակառակ այդ դաժա-
նի փափաքանաց որ կուգէր ջուրն
աւելի պղտորել ձուկ որսալու հա-
մար :

Բայց թէ ի՞նչու համար Հայ-
կական Միութիւնն տակնի վրայ
կը լինի երբ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ հան-
դիսի մը ճշմարիտ նկարագրու-
թիւնն կը հրատարակէ : Որով ի-
րաւամբ սոքա կը ստիպեն որ մեր
խմբագիրն՝ Հայկական Միութեան
մի անդամն եղած լինելուն հա-
մար՝ իւր համոզման դէմ գրէ :
Կրնայ ըլլալ որ այդ հանդիսին
ինչ ինչ մասերն ումանց համար
շատ սքանչելի թուեցան , բայց
այդ պատճառ մը չէ որ ամէն
մարդ ինչպէս նաեւ մեր թղթա-
կիցն միեւնոյնը խորհին այդ մա-
սին :

Այս երեկոյ տեղի կունենայ
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ թատե-
րական ներկայացումն ու ԵՐԻՑ
ՔԱՅԱՅԻ Կատակերգութիւնն ի Պօ-
հէմիլն Նէշնըլ Շօլ : Հայ գաղ-
թականութիւնն ատենն է որ ցոյց
տայ թէ մեր մէջ շատ քիչեր կան
հետեւող այն անձի խորհուրդնե-
րուն որ կուրենքու մէջ հաց կը
փնտռէ միշտ :

Արժ. Յովսէփ Վ. Սարաճ-
եան վաղը Ս. Պատարագ պիտի
մատուցանէ Ս. Ոսկերեան Մատ-
րան մէջ : Հայ հաւատացեալք կը
հրաւիրուին ներկայ լինիլ կէս օրէ
վերջ ժամը ճիշդ մէկին հոգեւո-
րապէս միութարուելու համար :

Առ Կ. Ե. Նիւ Եորք
«Մենք Վաշինկթօնի մէջ Հայ
յեղափոխականներու թուոյն մէջ
քո անունն եւս տեսանք : Այս թէ
սպառնական և թէ խրատական
խօսք մը լինի քեզ , և ետ կենաս
այդ ծնորդական դաղափարներէ
ապա ոչ վերջը խիստ շատ գէշ
կըլայ» :

Մեր բարեկամներէ մէկն ըս-
տացած է յիշեալ քաղաքի մի քա-
նի օր առաջ : Չայդ հոս հրատա-
րակելով կուգենք տպաւորել այդ
անձնութիւն կամ անոր նման յի-
մար անձերու մտքին վրայ սա
ճշմարտութիւնն թէ վայրենի և
բարբարոս երկրի մը մէջ չէ որ
կապրինք մենք , և թէ ցնորական
բան մ'է կարծեւ թէ Ուաշինկ-
թընի մէջ Հայ յեղափոխականնե-
րու խումբ մը կայ :

Ա. Զ. Դ.
Անդրիւրէն և Գաղիւրէն դաս
առնել փափաքող անձինք կրնան
ղիւրամատչելի գնով այցելու դա-
ստուն մը գտնել շաբաթը երեք
գիշերի համար : Փափաքողք պար-
տին դիմել Հետեւեալ հասցէին
Գասատու , ԱԶԱՏՈՒԹԻՒՆ
խմբագրութեան միջոցաւ :

ՎԵՀ. ՇԱՀԻ ՊԱՏԱՍԽԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅ
ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՐՁԻՆ

Վեհ Շահն Հետեւեալն գրած
է ի պատասխան Տ. Սարաֆեանի
տարած ուղերձին , որ , ինչպէս գի-
տեն մեր ընթերցողք , լաւ ընդու-
նելութիւն գտաւ . Ն. Վեհափա-
ռութեան կողմանէ :

Ահաւասիկ պատասխանին
թարգմանութիւնը որ կարտա-
տպենք «Արմէնիա» լրագրէն :

«Ամերիկայի Միացեալ» Նա-
հանգների մէջ բնակվող Հայոց
արժանաւոր պետերին և Տիարց
յայտ լինի :

«Որ ձեր կողմից ուղարկված
շնորհակալութեան և երախտագի-
տութեան ուղերձը Մեծապատիւ
Մօսիոյ Յովսէփ Սարաֆեանի միջ-
նորդութեամբ նորին Վեհափա-
ռութեան իմ Օգոստոսիառ թա-
գակալ տէր և բարերար Արքայից
Արքայի (Տէրն Բարձեալ նրա թա-
գաւորութիւնը և պետութիւնը
յաւիտեան պահեցէ ընդ իւր հո-
վանեալ) աչաց առջեւ դրվեց և
ն. Վեհափառութեան գոհունա-
կութեան արժանի եղաւ : Պատգա-
մաբերը մեծ ընդունելութիւն և
շնորհ գտաւ : Ձեր այդ գունակ
երախտագիտական զգացմանց ար-
տայայտութիւնը յայտ և ի միտս
նորին Արքայական մեծաշուք փա-
ռաւորութեան կարի յոյժ հաճո-
յական և դրուատանաց արժանի
թուեցաւ և Օգոստոսիառ իմ տէ-
րն հրամայեց ինձ ծանօթ առ-
նել ձեզ , որ մեր երկրի մէջ բը-
նակվող և եղող բոլոր ազգերի
անդորրութիւնը , ազատութիւնը
և ապահովութիւնը մշտապէս մեր
ամենաջերմ իղձն եղած է և է ,
մասնաւորապէս Հայ ազգին , որ
ի հնուց անտի մեր պետութեան
և երկրի մէջ անսլոյնականութիւն
և ապաւէն գտած է և մեր թա-
գաւորներին շնորհներին արժանա-
ցած և մեծ ծառայութիւններ այս
մշտնջենաւոր Տէրութեան մատու-
ցած է և կը մատուցանէ և այսու-
հետեւ եւս մեր կայսերական հո-
գածութեան և համակրանաց ա-
ռարկայ պիտի լինի :

«Նորին Վեհափառութիւնն ինձ
հրամայեց , որ ձեր՝ Մեծապատիւ
պետերից ուղերձի պատասխանն
գրելով , նորին կայսերական Մե-
ծութեան առ Հայ ազգն ունեցած
շնորհաց և մարդասիրութեան յա-
րատուութեան մասին հաւանութե-
ք տամ , որպէս զի միշտ շնորհալարաւ
ն. կայսերական Վեհափառու-
թեան ամենաթանգ կենաց համար
աղօթարար լինիք :

Տուկալի կոյ ըսաւ 1309
Սորոքաբեալէ՝ «Ալի-Ասղար ,
Ամին-Սուլթան» :

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈ-
ՎԱՍՍՆԱԿԻՆ ՄԷՁ

Ալեքս. — Դուք ո՞ր աչքով-
նիդ տեսաք թէ Վարդանի հա-
ղած հազուատներն Հին Են . կըր-
նա՞ք արդեօք այդպիսի ձեռք մը
հազուատ Հինդ տալարի վարձու
բերել մէկ գիշերի համար : Ինչո՞ւ
ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Հին կը հոչէ այդ
ամէնն : Ճշմարտութիւնն է այս :

Բ. — Մի պոռաք պարոն ,
դուք Հին բառին նշանակութիւնն
չէ՞ք գիտէր տակաւին : Կերեւի թէ
Անդրիւրէն չուած Հայերէնն ալ
մոռցած է , և թէ երբէք գիտէիք
առաջ , ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Հին կոչե-
լով այդ հանդերձներն ցնցոտիներ
ըսել չէ ուղար : Խօսք հասկցող
մարդիկ գիտեն թէ ինչ կը նշանա-
կէ ճշայնական Հին հազուատներ :

ԿՐԿՆԱԿ ԱՂԵՏԱԼԻԲ
ՍԻՄՈՆԵԱՆ ԱՍՍՏՈՒՐՆ ՈՒ
ՍԻՐՈՒՀԻՆ

Փրօվիտէնս 25 Ապրիլ
Ջարհուրեղի մարդասպանու-
թիւնն ու անձնասպանութիւնը
զոր տեղի ունեցաւ քաղաքիս մէջ
անցեալ շաբաթ գիշեր , յիրաւի
սոսկալի է նկարագրելն . և տեսա-
րանն՝ աղիողորմ . մասնաւոր Հա-
յոցս համար , քանզի մեր մէջ թէ-
պէտ հազուադէպ են այս օրինակ
դէպքեր անպատուաբեր , սակայն
բա՛ւ է մեր փոքրիկ թիւն ու պար-
կեշտ համբաւն արատաւորել այս
բազմամարդ ու քաղաքակիրթ
ազգին առջեւ :

Բնիկ Խարբեղցի Ասատուր
Սիմոնեան 25 ամեայ երիտասար-
դէն իւր չորս տարիներ առաջ իւր
հայրենիքն ու սիրելիքն պատուա-
կան — գուրգուրացող ծնողքն աղ-
նիւ — կը պարտաւորի թողուլ՝
պանդխտանալու Ամերիկայի նման
հեռաւոր մի երկիր՝ և այդ , անպա-
տիւ կնկան մը երեսէն : Եւ այսօր
ուրիշ անպիտան աղջկան մ'երեսէն
ո՛ւր կը պարտաւորի պանդխտա-
նալ Սիմոնեան Աստուր :

Ամերիկայ գալուն առաջին տա-
րին Միլլէրի-Մասաչուզէց՝ բամ-
պակի գործարանի մը մէջ աշխա-
տելով իւր ապրուստ կը հայթայ-
թէ . յետոյ ձգելով հոն՝ քաղաքս
կուգայ ուր երեք տարիէ ի վեր
այս այն զբաղմամբ օրական պա-
րէն մի կը շինէր գծաւորաւ :

Վերջերս Կոդանան Գալիս
անուն բարեկամին տան մէջ կապ-
րէր թէպէտ , առօրեայ այցն
իւր սիրուհւոյ , սակայն , անխտր
կը կատարէր : Սիրուհին՝ որ 26
տարեկան իրանտացի անպարկեշտ
աղջիկ մ'էր Մէրի Կարահան ան-
ուամբ , ասկէ իւր երեք շաբաթ
առաջ Սիմոնեանէ յանդիման 10
տոլար կը կորդէ : Սիմոնեան նկա-
տելով զայս կողպատուց , կը ջա-
նայ համոզել զաղջիկն խոստովա-
նիլ ու վերադարձնել այդ գու-
մարն : Ի դուր կաշխատի Սիմոն-
եան թէ՛ յորդորելով և թէ՛ ըս-
պառնալով : Աղջիկն չկամենար
մէկ տոլարէ աւելի տալ իւր սի-
րահարին : Այս միջոցին յաճախա-
կի այցերն կը նուազին և երբեմնա-
կի աղմկալի բանակներն կունե-
նան այդ գումարին վասն :

Շաբաթ երկուրդ դարձեալ ըստ
իւրեանց Հին սովորութեան երկու-
քին սիրահարք միասին կառանձ-
նանաւ տանը վերի յարկը գըտ-
նուած աղջկան յատկացեալ սեն-
եակն՝ ուր հազիւ միայն մէկ քա-
ռորդ ժամ կանցնի խիստ կրակոտ
վիճարանութեամբ , և ահա տանը
սրկինն ու դրացիներն իրիւրիւրի
քառեակ պայթմանց ձայնէն սար-
ստախճար փողոց կը վազեն փօ-
լիս , փօլիս , փօլիս , աղաղակե-
լով : Մի քանի վայրկեան շանցած
տունը կը լեցուի անթիւ բազմու-
թեամբ , և քիչ վերջ քաղաքա-
պետութիւնը , փօլիսներով , քըն-
նիչ թփիչներով՝ խանալ բազմու-
թիւնը դժուարաւ ձեղքելով կը
հասնին սենեակի ամրափակ դրան
զոր աղջիկն կղպած է եղեր առ
հարկ : Ու ժգին հարուածելով դու-
ռն կը բացուի և ահա՛ կը պար-
զուի զարհուրելի տեսարանն ան-
ղք թիւն : Սիմոնեան սենեկին մէջ-
տեղը տախտակամածին վրայ փռու-
ուած է մահացու վիրաւոր , թէ-
պէտ քիչ ինչ զգաստ : Իսկ ան-
գին մահճակալին վրայ երկարած

արիւնթաթախ աղջիկն աղիքն ու
փորտիքը դուրս թափած կը
ձգնաժամի հոգին փչելու : Նէրա
վերջի՛ն վայրկեանն է յաշխարհի :

Քաղաքապետութիւնը և բը-
ժիշկը հակիրճ քննութենէ մը յե-
տոյ կը փոխադրեն Սիմոնեանն
ի հիւանդանոց : Իսկ զգայազուրկ
մահամեծ աղջիկն տան մէջ մի
քանի ժամ յետոյ կաւանդէ հո-
գին : Բժիշկներն կը յայտարարեն
թէ , Սիմոնեանն իրիւրիւրի չորս
կապարներն ալ աղջկան փորը
պարպելէ յետոյ , մարմնաւոյն այլ
և այլ կողմերէն ալ , սրտէն ու
կունակէն եօթը դաշոյնի հարուած-
ներով կտրտարձ է խեղճ աղջիկն :
Դաշոյնի ամենամեծ կտրուածն
ստիւնքէն մինչեւ պօրտը կը հասնի
որ սա երկիցս կրկնուելով աղիքն
ու փորտիքը դուրս թափած է :
Իւր ահագին դաշոյնը աղջկան
կունակէն ալ սոսկալի ճեղքուած ք-
ներ բացած էր :

Ըստ յայտարարութեան բժը-
կաց , Սիմոնեանի մարմնոյն մէջ
մտած նպարտի գնտակն իւր ու-
ղիղ նպատակէն շեղած լինելով ,
դարձած է Սիմոնեանի վրայ , ո-
րով իւր կեանքն ալ վերջացած է
գնալ պանդխտանալու այն երկրին
ուր իւր սիրուհւոյ մօտ պիտ' մը-
նայ յաւիտեան :

Սիմոնեանի Հայ բարեկամքն
ու հօրեղբորդին գինք տեսնե-
լու կերթան ի հիւանդանոցն՝ սա-
կայն չեն թոյլադրուած մի բառ
իսկ փոխանակելու : Ըստ Սիմոն-
եանի յայտարարութեան որ հակա-
սական են եղեր առ քննիչս , իւր
թէ աղջիկն Սիմոնեանի ձեռքէն
առնել կը փորձէ իրիւրիւրի ու
յանկարձ պարպուելով թէ՛ աղ-
ջիկն և թէ՛ գինք գնդակած է :

Եւ երբ կը հարցաւ թէ՛ աղջ-
կան մարմնոյն վրայ եղած սոսկա-
լի կտրուածքներն ի՞նչ են . Վլը
պատասխանէ , անոնք ես ըրի ինք-
նապաշտպանութեան համար .
սակայն այս ամենուն հետ մէկ-
տեղ կը խոստովանի թէ խնդիրն
տասը տոլարին վրայ է եղեր ուր-
կէ այդ աղետալի հետեւանաց կը
հասնին երկուքին սիրահարք :

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ԻՄԱՍՏՈՒՆ
ԽՈՍՔԵՐ

— Խնայողութիւնն մարդուս
պարտքերը կը ձմարէ , իսկ յուսա-
հատութիւնն կը բազմապատկէ
զայնս :

— Դժգոհութիւնն անձնասի-
րութիւնն է և կամքի անհաստա-
տութիւնն :

— Նեղութեան մէջ լինող մար-
դը միջոցներ կը գտնէ , և թէ չի
կարողանայ , կըստեղծէ զայնս :

— Մարդս իւր անտրտակին
կը հետեւի : Իսկ բնութիւնն կը
կատարէ մոտեցեալ :

— Ամենէ արագընթաց բանե-
րու մէջ դրամը ամենէ արագըն-
թացողն է միշտ :

— Այն մարդը որ կը ջանայ
իւր անտրտակին օդին մէջ խըղ-
դել , լաւագոյն կընէ և թէ ինք-
զինքն գետին մէջ խղդելով տըխ-
րութիւնն անցունէ :

— Ճշմարտութիւնն Աստուծոյ
չունիլն է :

— Արժանիքը մարդկութեան
ճշմարիտ կշիռն է , բայց հարստու-
թիւնն խրած է այդ կշիռն :

— Աստուծոյ երկիւղը , չարն
ատել է :

— Ճշմարտութիւնն ու ներդրումը իրենց սիրոյ թոյններն են։

— Աւելի քանստուգութիւնն հարկաւոր է դիմանալու քաջ գործերու համար։

— Անոնք որք Աստուծոյ կը վստահան մարդիկներէ երկիւղ չունին շատ։

— Այն որ Աստուծոյ համար կը գործէ իւր վարձքն կանխիկ կընդունի միշտ։

— Աստուած չի լուսաւորեր այն մարդուն տունը որ իւր պատուհաններն փակ կը պահէ արեւին առջեւ։

— Ժողովրդեան սէրն գրաւելու լաւագոյն միջոցն սիրելի լինին է։

— Իմաստուն մարդը երբ սըլաւ մը գործէ, բան մը կը սորվի։

— Սովորութիւնն տէր է, իսկ մարդս գերի։

— Աշխարհս այն ատեն բարեկարգուած պիտի լինի երբ մարդիկ ուսանին քիչ ծիծաղել իրենց դրացիներու, իսկ շատ իրենց սըլաւին ու յանցանքին վրայ։

— Ինչպէս կրթեմ զաւակս որ ճշմարտութեան ճամբուն մէջ քալէ, հարցունք մէկը իմաստուն անձէ մը։ Միեւնոյն ճամբայէն քալելով, պատասխանեց այս վերջինն։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«Բազմազաւ Ամերիկա» անուն Արարբէյն առաջին շաբաթաթերթն հրատարակուել սկսեցաւ Ապրիլ 15ին։ Թերթին մեծութիւնը ԱՅՍՏՈՒԹԻՒՆԻ չափ է և կը պարունակէ չորս սիւներ միայն։ Սորա մէկ երեսն Անգլիերէն խմբագրուած է իսկ միւսներն Արարբէյնէն։ Լրագիրն, ինչպէս ծանուցած էինք ժամանակին, հակաթերթական թերթ մը չէ, այլ պաշտպան տաճկական շահունք։ Իւր առաջին թիւին մէջ մասնաւոր յօդուած մ'ունի Սուլթան Ապտիւլ Համիթի ներկայումս։ Բազմազաւ խմբագիրներն ու տէրերն են Տէր-Ա. և Հ. Ճ. Արալի, իսկ անօրէն է Արթիւն Էֆ. Գէթրաքեան անուն հայագիրն։ Խմբագրատունն է 45 Փըրլ փողոց Նիւ Եորք։

— Ծըրնը օֆ ահի Մանչեսթըր ձէօկրաֆիքը Սոսայթի լրագրի մէջ հրատարակուած է։ Մ. Չէրապի մի բանաստեղծութիւնն վերջերս մասնաւոր տետրակի մը ձեւով հրատարակուած է «Արմէնիա» անունամբ որոյ մէջ կայ նաեւ Հայաստանի մի գունաւոր քարտէշը։ Այս տետրէն ստանալ փափաքողը պարտին դիմել ընկերութեան գրաստանին։

— Լարմէնի լրագիրն կը ծանուցանէ թէ փարիզի մէջ Տ. Ա. Փօնէյսթ անուն մէկը տեսակ մը օդ մարդու թուղթի վաճառ հանած է բարիէ տ'Արմէնի անունամբ, և տեսակ մը ճանճեր ջնջող հեղուկ՝ էօ տ'Արմէնի անունով։

— Պրուքլինի նշանաւոր մի վաճառատան (Բսթէրն) մէջ նոր տեսակ կտաւելէն մի վաճառ հանուած է վերջերս «Արմէնիան սէր» անունով։ Հայ անունը որ երբեմն անպատուարեր բան մը կը նկատուէր, այժմ ուշադրութիւն գրաւելու համար մի միջոց սեպուած է շատերու կողմանէ։

— Բ. Դուռը դադրեցուցած է Հայրենիք լրագրի հրատարակութիւնն իրիմեան Հայրենիք ընտրելու ջանքերէն։

— Սուլթանը, կըսէ Մարմէնի, Կ. Պօլսի բերել տուած է Եդեսիացի նշանաւոր սուր շինողներէն Գլընիպաշեան եղբայրներն, որոց Հայկական գաւառներու մէջ լինելն անապահով նկատած է նորին վեհափառութիւնն։

— Փարիզի Փաթրի լրագրին գրուած Կ. Պօլսէն թղթակցութիւն մը կըսէ ի մէջ այլոց թէ, Սուլթան Համիտի մայրը Հայ է և ինքն Սուլթանը Հայկական դիմադրութիւն մը ունի։

— Մօրնիկ Ատվէրթայզը լրագրի Ապրիլ 19ի թիւին առաջի տպագրութեան մէջ հրատարակուած կայ Տ. Յ. Սարաֆեանի պատուանշան ընդունելուն և Շահին ներկայանալուն առթիւ մի ընդարձակ յօդուած՝ Շահին մեր գաղթականութեան ուղղած պատասխանի թարգմանութեամբ և Տ. Սարաֆեանի պատկերով շահնդեհը, որն արտասուած է ԱՅՍՏՈՒԹԻՒՆԻ վերջի թիւէն։ Իսկ յիշեալ թերթի երկրորդ տպագրութեան մէջ յօդուածն միայն կայ առանց պատկերի։ Սա յօդուածի հեղինակն է մեր ալեգորի գրագէտն, Տ. Խ. Օսկանեան։

ՊՈԼՍ ԱՐԱՋԱՆԻԱՆ

ՆԵՐԱՄԻՉ ԵՒ ԱՐՏԱՄԻՉ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՊՐԱՆԲ-ՆԵՐՈՒ

Թիւ 60 Փըրլ փողոց Նիւ Եորք

Պատիւ ունի ծանուցանել ընդհանուր Հայ Հասարակութեան թէ իւր գործի բերմամբ ամէն տեսակ ապրանքներ կրնայ բերել տալ Թուրքիայէն կամ ուրիշ երկրներէ ծառ հարկեր միջնորդէնով միայն։ Այժմ առ ձեռքն ունի Տաճկաստանի ընտիր պանիր (քէլ-լէ փէնիր) և ձեթապտուղ (գէյ-թին)։ Սորա փոքր քանակութեամբ չեն ծախուիր թէւ և, բայց Հայոց համար իւր բացառութիւն պանիրն կը վաճառի կտորով միայն, որոյ իւրաքանչիւր կտորը կը կշռէ իւր տասը փառնաւ։ Փառնաւը կարծէ 22 սէնթ, իսկ ձիթապտուղն կը վաճառուի տակառով, փառնաւը ծախէ թիւ։ Իւրաքանչիւր տակառ կը կշռէ իւր 150 փառնաւ։

Մի մոռնաք անունն ու հասցէն։ Ուրիշ անգամ այսպիսի առիթ ձեռք չիցնար։ Ապրանքներն ամէնէն ընտիր տեսակներէն են։ Դիմել անձամբ կամ նամակաւ հետեւեալ հասցէին։

B. AGADJANIAN
60 Pearl St. N. Y.

Վ. Կ. ԲԱՐԱԿԱՆ
Ուսթըր Մաս

Կը հրաւիրէ իւր հայրենակիցներն հանդերձեցնեն իւր գըլ-լարի գնելու համար նախ դիմել Bay State clothing Co. ընկերութեան վաճառատունն ի թիւ 46 և 48 Փըրլթը ըսթրիթ, ուր ինքն ամէն Շաբաթ երեկոյներ ներկայ լինելով մասնաւոր հոգ կը տանի Հայ յաճախորդաց։

Ա. Զ. Դ

Զիբակոյէն Պ. Պօղոս Սիմէոնեան անուն անձի մը մի նամակ եկած է մեր քով։ Եթէ տէրն մեզ դիմէ պիտի ստանայ զայն։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԾԵՐ ՍԻՐԱՀԱՐԸ

(Շաբ. տե'ս թիւ 50)

— օ —

Մարտիրոս աղա — Շատ լաւ, աղգասիրական և հայրենասիրական ի՞նչ գործ կատարած էք։ Կուգեմ գիտնալ։

Զաքար — Շատ, շատ, որ մէկը ըսեմ, Նիւ Եորք եղած տեսնա հայրենասիրական այնպիսի գործեր ըրի որ անունս միշտ անմոռաց պիտի մնայ։ Ատենախօսութիւններ ըրի հայրենասիրական ձեռնարկութեանց մէջ պոռալով, գոռալով, աղգիս փրկութեանը համար սուր առնելու և զայն երբէ՛ք երբէ՛ք վար չթողնելու համար ուխտեր ըրի, Հայրենասիրաց Միութեան համար հանգանակութիւն մը բացի ակնկալուած արդիւնքին քառապատիւ տեսնելով կէսը քսակս նետել ջանացի թէ և չյաջողեցայ, վերջապէս ժողովըրդին ըսի որ պօշիս փակին ես զիրենք «սէլ-մէթը» պիտի հանեմ, բայց ժողովուրդը փոխանակ պօշիս փակելու, զայն փրցուց և ըսկըսեց անով զիս հալածել։ Խօսքին կարծը, աղգիս չա՛նք թէ և կը սիրեմ, բայց փառքիս չա՛նք քիչ մը աւելի կը սիրեմ, անանկ որ եթէ աղգիս չահերը և փառքիս չահերը որ մը գիս հրաւիրելու հըրաւիրելու ըլլան, վերջինը անմիջապէս կընդունիմ և առաջինին կըսեմ որ վաղը պիտի գամ։

Մ. աղա — Գանի տարեկան էք։

Զաքար — Գերմանացիներուն և Գաղղիացիներուն վերջին պատերազմին թամամ 32 տարեկան էի, բայց հիմայ աղէկ մը չեմ յիշեր թէ քանի տարեկան եմ։ Վերջապէս այս և ասոր նման շատ մը խօսքերէն ետքը, ես այլևս գործը եփեցաւ ըսի ինքնիրենս, և Մարտիրոս աղան ալ, շատ աղէկ Պ. Զաքար աղջիկս քեզի պէս մարդու մը տալ ինձի պատիւ կը բերէ, խնամէ՛ք զուգի է եղբր առ, ինքը տեսնա, թագը պատկը Համբուրն Գիլան Գիլան պիտի ըսէ տէյի ու մուտ ընենիքէն նայիս ի՞նչ ըսէ, «պարոն», երբ դուրս ելլաք դուռը կը խնդրեմ որ գոցէք», և այս ըսելով նորէն գրասեղանին դարցաւ և սկսեց գրել։ Ես ալ այնչափ բարկացայ որ ոտքի վերայ ելայ և ֆէսս դըլուսի դնելով այսպէս ըսի, — Երբ դուն այսչափ հարցումներ ընելէ և զոհողուցիչ պատասխաններ տանելէ յետոյ եթէ ըսէիր ինձ թէ աղջկանը ամուսին ըլլալու յարմար մէկը չէի, թէ արժանաւորութիւն չունէի, թէ անպիտան պոռոտախօսին մէկն էի, ծեր և անկուտի էի, տգէտ էի, ես ատոնց կը խօսայի, կը պոռայի, կը խոնարէի, կը համբերէի, կը տգնէի ու կը ճգնէի, կը լռէի, կը ներէի, կը պապանձէի, կը համաձայնէի և վերջապէս լեզուս բաշելով կառնէի ու կը քալէի։ Բայց ե՛րբ առանց պատասխան մը տալու կըռնակնիդ ինձ կը դարձնէք ու ծեր գործին կը նայիք և իւր ձեր վերջնական խօսքը՝ դուրս ելլալու առանա դուռը ետեւէս գոցել հրամայելով զիս կանապտուէք ու կանարդէք, յայնժամ ես ալ կը բարկանամ, կը դայրանամ, կը հաստնամ կը բարկանամ, կը տաճկնամ, կը մոնչեմ, կը բառաչեմ, կը մարտնչիմ և այն սուրը որ ուխտած

եմ ձեռքէս վար չի դնել, կուրծքը կը խօթեմ, զձեզ սպաննելով կը ձերբակալեմ ու կը դատաւարտուիմ և իւր մարդասպան կը կախուիմ և մեռնելով կը բողոքեմ, կը բողոքեմ, կը բողոքեմ։

Ահա ասոնք ըսելով առանց մնաք բարով ըսելու դռնէն դուրս ելայ։ (Շարունակելի)

Պատուելին. — Մէկի մը համար դիւրին է բան մը փոխելն, իսկ շինելն դժուար միշտ։

Երեսներ. — Զեմ կրնար շատ հաւատ ընծայել ատոր։ Օրինակի համար, դու կրնաս զիս դիւրութեամբ ամուսնացնել, բայց այդ ամուսնութիւնն փոխելն մեծ դժուարութիւն է անշուշտ։

— Պ. Բոլիկ, ըսաւ մահամբձ խմբագիրն, կաղաչեմ, մէկ խնդիր մ'ունիմ քեզ հանձնելու կատարել։

— Ի՞նչ է այդ խնդիրը։

— Կը փափաքեմ որ մեր գիւղի միւս խմբագիրն ալ դարմանես երբ հիւանդանալու լինի։

— Երբէք չեմ մոռնար խեղճ հօրս վերջի խօսքերն։

— Ի՞նչ ըսաւ մեռած ատեն։

— Բնաւ չեմ յիշեր։

Պ. — Տօթէօր, դու չըսիր որ Պ. Բ. վտանգն անցուցած և լաւագոյն վիճակի մը մէջ մտնել սկսած է։

— Այո ըսի։

Պ. — Բայց այս առտու մեռած է։ Ինչպէ՛ս կը բացատրես այդ։

Տ. — Բ. մահն աղէկ նշան է անշուշտ, դու հազար անգամ ըսած ես ինձ թէ Բ. աւելի հանգիստ պիտի լինէր յառաջիկա կեանքի մէջ, քան թէ այս աշխարհի վրայ։

— Ո՞վ էր որ Արամն ու Եւան Եդեմի պարտէզէն դուրս ձգեց, Պօղոս, հարցունք վարժապետն իւր աշակերտին։

— Զեմ յիշեր, պատասխանեց Պօղոս։

— Այդ ի՞նչ մեծ ամօթ է Պօղոս, որ չես կրնար պատասխանել այս հարցման։ Տես պղտրի վեց տարեկան Պետրոսն որ ձեռքը վեր վերցնել է պատասխանելու համար։ Ըսէ՛ տեսնեմ Պետրոսի, ո՞վ էր այն։

— Պարտիզպանն էր, հպարտութեամբ մը պատասխանեց փոքրիկն Պետրոս։

Փաստաբանն. — Ի՞նչ է անունըդ, սեւամարթ։

Սեւամարթն. — Ծիւմ է անունս, տէր փաստաբան։

Փաս. — Ի՞նչ է գործդ։

Սեւ. — Կառապան եմ։

Փաս. — Դու ծիւմ անունով եղբայր մ'ալ ունիս միեւնոյն գործով զբաղող։

Սեւ. — Եղբայրս տարիներ առաջ մեռած է։

Փաս. Ի՞նչ էր եղբայրդ մեռնելէ առաջ։

Սեւ. — Շատ առողջ էր, Պ. փաստաբան։

ՃԳՆԱԴՈՐ ԷՂՕ

Ա.

(Շարունակութիւն տե'ս թիւ 52)

— օ —

Եւ ընդհանուր գոհարանակաւ աղօթքները սենեակը լցրին այնպէս, որ Աստուած, եթէ խուլ էլ լինէր, կը լսէր այդ ջերմ աղօթքը։

Երկուստեք իրար վայրկեան կանաչութիւնը իջաւ. ամեն մարդ այժմ սկսեց իւր հոգի և արտի մասին մտածել։

Իսկ վճարուելիք փողը։

— Հէ՛յ մարդիկ, բացականչեց յանկարծ մի ծերունի, — ամենքս էլ ուրախացանք լսելով, որ Հասան բէգը վերջապէս հաճում է այլ ևս մեր կողմերը չխալել, մեր ցորենին դեղերը չայրել, մեր գեղեցիկները չառնառնել։ Բայց այդ բոլորը անելու համար արդէն քանի՞ շաբաթ հաճում է 500 ոսկի վարձ էլ ուղղել... Մեր գիւղը սաղ ծախես դրա կէսը չի արժիլ։ մեզնից ո՞ր մէկը ունի մէկ ոսկի պատրաստ փողս. 500 ոսկին ո՞ր տեղից պիտի գտնենք, որ Հասան բէգի առաջակութիւնը դնենք, ասնք նրան, խնդրենք, որ բարեհաճի այլ եւս առաջակութիւններ չանել և հեռանալ գիւղից։

Ուրախութեան մէջ ոչ ոք չէր մտածել դրա վրայ և այժմ, երբ ծերունին յիշեցրեց, ամենքի զուարթ դէմքերը խփոյն տխուր փոխուեցին։

Պարզ էր այս անգամ, որ առաջակի ձեռքից ազատուել անկարելի էր։ Հի՛նդ հարկեր ոսկի և մի չնչին, աղքատ գեղից։ Մի քանի քէլ չէ կարող տալ թիւրքահայաստանում այդ գումարը իւր փաշային, եթէ յանկարծ նա կամենայ այդ փրկանքով ազատել իւր ձեռքից քաղաքը։

Երկար խօսեցին խառն խառն. Եւսէն, Եւսէն, ապա գոռգոռալով, յետոյ կուռելով. մի քանի խումբ միմեկին անգամ բռնեցը ներով սկսեցին խօսել... վերջապէս երկուստեքները կամաց կամաց սկսեցին սենեակից դուրս գնալ թողնելով այնտեղ միայն ծերունիներին։

Սրանք նախ փոքր ինչ լուրջութեամբ ու մօրուքները չփելով մտածեցին, յետոյ սկսեցին միմեկնց հետ ցած ձայնով խօսակցել։

— Եղբայրներ, վերջ ի վերջոյ ասաց մէկը, — ուրիշ ճար չկայ. կամ պէտք է լուրջ ու զիմանալ և կամ այդ գումարը ձորել, տալ։ Ծունք թէ և մէկ հատ է, բայց Աստուած մի արասցէ, որ մեր ջանքերից մէկը մոտած յանկարծ նրա վրայ քար քցել. մէկ էլ տեսար խփոյն՝ մի փոքրիկ պատճառի սպասող՝ միւս ջանքի գիւղը կը թափուեն ու քար քարի վրայ չեն թափել, մեր գիւղի թողը կը բարձրացնեն։

— Այդ այդ պէս է, դիտեց երկրորդը, — բայց զիմանալ անկարելի է. պիտի մի կերպով փող մէջներս հաւաքենք և տանք անորէնին ու աղատուենք նրա ձեռքից, մինչեւ որ տեսնենք՝ մի ուրիշ աւազակ էլ երբ կը գայ կը նստի մեր գլխին։

— Ես էլ այդպէս եմ ասում, մէջ մտաւ քէհեան վաճառական կերպով, — Հարկեր տուն ենք. ամեն մէկին 5 ոսկի կընկնի, ձորենք ու տանք։

Յետոյ երկար խօսեցին. վերջապէս վաճառական ծախքով ու առաջակին տալ։

Փոքր ինչ իրենց դրութեան մասին խօսեցին, փոքր ինչ Աստուծուն գանգատեցին, փոքր ինչ ախ ու վախ քաշեցին, թրջեցին իրենց մօրուքները, յետոյ ոտքի ելան, բարեւի փոխարէն դիւրութեամբ միմեկնց նայեցին, դըլուրջեցին թափաշարեցին և վերջոյն հարբածների պէս՝ հեռացան։

(Շարունակելի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԹԻՒՆ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ

Այս երգարանն որ իւր տեսակին մէջ մինչ ցարդ տպուածներէ թէ՛ գերազանցն և թէ՛ ամէնաբարձակն պիտի լինի, մաքուր թղթի վրայ ընտիր տպագրութեամբ: Բոլոր գիրքն պիտի լրանայ իւր երկու ամիսէն:

Հասարակութեան թախանձանաց համեմատ որոշած ենք իւր 500 օրինակ ֆօրմա առ ֆօրմա ծախել: Մէն մի ֆօրմա 16 երեսէ կը բաղկանայ և կարծէ երկու սէնթ: Ամբողջ գրքին գինն է 50 սէնթ, 75 սէնթ և մէկ տոլար՝ կազմին համեմատ:

Սոյն ֆօրմաներէն գնել ուզողներ կրնան դրամն յղել խմբադրութեան փոխարէն գնոյն հետ մէկտեղ: Մէկէ աւելի օրինակ գրողներէ ճամբու ծախք չի պահանջուիր:

Ա. Զ. Դ.

Նիւ ձէրգի նահանգի Փասատինայ գիւղին մէջ մէկը երկու կտոր երկիր ունի ծախու: Գիններն ածան են և պայմանք գոհացուցիչ: Գնել փափաքողը պարտին գիմել հետեւեալ հասցէին: Մ. Զ. Ա. ԶԱՏՈՒԹԻՒՆԻ Խմբագրութեան միջոցաւ:

Ս. Ա. ՍԱՄՈՐԻԱՆ

107 Ֆէտէրալ փողոց,
Փրովիտէնս Բ. Ա.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ Հայ Հասարակութեան թէ գործակալն ինքնով չորհանալային հաշակաւոր ընկերութեան մը, գիրութիւնն ունի ամէն կարգի տոմսակներ վաճառել Եւրոպայի ամէն քաղաքներու համար և թէ փոխադարձաբար:

Գիններն խիստ գիւրամատչելի են: Փափաքողը պարտին գիմել հետեւեալ հասցէին՝

S. A. SAMOOR.

107 Federal st, Providence, R. I.

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼ ԵԱՆԻ

Գրած ոտանաւորներէն

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իւրեւ նմոյշներ դառնալու քաղաքներէ մէջ և զանազան տպագրութիւններէ տակ իւր երկնի գրած ոտանաւորներէն որոնք ժամանակին հրատարակուած չը լինելով կորսուած են այժմ: Այն մի քանի ոտանաւորներ որոնք իւրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ: ցիր ու ցան կը գտնուին Կ. Պօլիս տպագրուած ազգային երգարաններին մէջ որոց վերստին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է և «Ասիա» և «Արմենիա» լրագիրներին մէջ: Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տըրուած են նաեւ թէ այդ ոտանաւոր ինչ տպագրութիւններէ տակ ներշնչուելով գրուած են:

Գինն է 15 սանթիմ:

Ա. Զ. Դ.

Ի նպատակ Հայ երիտասարդաց Թանգարանի Միութեան կը ծախուին:



1. Բաֆֆի վերի պատկերին խոշորագիրը, տասնըմէկ ու կէս մասնաշափ երկայն և ութը մասնաշափ լայն: Գին 10 սէնթ:

Գում Գափուի հերոսներու պատկերը:

2. Յարուսիւն Չունգուլեան 3. Կէմալադ Մանուկ երկուքը 5 սէնթ:

Գնել փափաքողներ կը պարտին գիմել Միութեան Թանգարանայեալ կամ նորա գործակալաց և կամ Ա. ԶԱՏՈՒԹԻՒՆ Լըրագրի խմբագրատունը:

Փոստի ծախքը մեր վրայ է:

Պետրոս Թորոսեան
Թանգարանայեալ
779 Երկրորդ ամիս Նիւ Եօրք

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՆԳՐԱԿԱՆ
ՓՈՐԹՈՒՆԻ
ՄԻՋԻՆԵՐԻ
ՄԻՋԻՆԵՐԻ
ՄԻՋԻՆԵՐԻ

Ա. Զ. Դ.

Հայ երիտասարդաց Թանգարանի Միութեան նշանակալութիւնն պատիւ ունի ծանուցանել թէ ի գիրութիւնն ընթերցասէր Հասարակութեան հետեւեալ գործակալութիւններն Հաստատուած են Նիւ Եօրքի, շրջակայից և այլ քաղաքներու մէջ:

Տ. Մ. Տաղեան,

Նիւ Եօրք 779 Երկ. Ավ. Տ. Զ. Աղապեան, Նիւ Եօրք:

432 Ուէսթ 56րդ Փողոց Տ. Մ. Շիլմանեան,

91 Մատիսըն Փողոց, Նիւ Եօրք Տ. Զ. Համալեան,

Ն. Ե. 43 Սանտ Փղց Պրուէլին Տ. Զ. Պասմաճեան,

Բոլէճ Փոյնթ, Լ. Ա. Տ. Կ. Չանգալեան,

455 Փալատիս Ավ. ձէրգի Սիթի Հայթս, Ն. Զ. Տ. Պ. Տէյրմանճեան,

313 Ուէսթ Լադրիթ, Ուէսթ Հոպօքըն Ն. Զ. Տ. Զ. Չունգուլեան,

Փաթրաքն, Ն. Զ. Տ. Զ. Թօփրահանեան,

Ֆիլատէլֆիա, Փէնս. Տ. Զ. Թօփրահանեան,

Մալպրո և Թըրնփիլ, Բօնն. Տ. Տ. Նոհարաբեան,

Փրովիտէնս, Բ. Ա. Տ. Կ. Սոպաճեան,

Եօնքըրըս, Ն. Ե.

F. SCHAUW,



431 Palisade Avenue,
JERSEY CITY N. J., N. J.

Open day and night.

Eguiniav

Binding &

Mailing Co.

12 Frankfort Street,

NEW YORK.

Open day and night.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՆԳՐԱԿԱՆ
ՓՈՐԹՈՒՆԻ
ՄԻՋԻՆԵՐԻ
ՄԻՋԻՆԵՐԻ
ՄԻՋԻՆԵՐԻ

ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Այն ամէն Հայերն որք կը փափաքին դրամ զրկել իրենց բարեկամաց ի Թուրքիա կամ ի Յունաստան, Ձէք Պանք դրամատան փոխանակաւորներն պիտի գտնեն ամենապահով, ամենաաժան և ևաւարոյն:

MATHEWS & CO.,

BANKERS.

No. 2 Wall St. New York

Andrew Scott, John May

Scott & May,

Illustrated
and Plain Newspaper,

BOOK & JOB

PRINTERS.

PRESS ROOMS:

15 Spruce St., NEW YORK.

Presses Running Day & Night.



ԺՅԱԳ ՎԳՂ

ԵՍԵՍՓ ԵՍՍՓ

438



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԱՅԺՄ

ՏԱՄԵՆ ԵՒ ՀԻՆԳ ՕՐԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ

Տարեկան բաժանորդագիրն մէկ տոլար մ'է միայն,

ԿԱՄ ԵՐԵՒ ՕՐԸ ՄԷԿ ՍԷՆԹ.

Ամէն մէկ թուի մէջ

Խմբագրական յօդուածներ, Թըդ-

թակցութիւններ, զուարճալիք և

այլ կարեւոր յօդուածներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ARMENIA

ԱՆ

ANGLO FRENCH JOURNAL

Political & Literary

Published on 1st & 16th of every month.

Editor: Minasse Tcheraz,

Ex-Armenian Delegate at the Berlin Congress.

Address: 28 Bedford Place,

London, W. C. ENG.

I. A. ISAACS,

Տպագրչաց և Կազմարարաց վերաբերեալ մեքենաներ.

36 & 39 Beekman St.,

Նիւ Եօրք.

Ծան--եր կը գնէք մի մոտանաք ըսել թէ ծանուցումն Ա. ԶԱՏՈՒԹԻՒՆԻ մէջ տեսաք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԹԻՒՆ

Կ Ս Կ Ծ Ա Ն Բ

Գրեց

Հ. ԷԿԻՆԵԱՆ.

Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած, որ կը վաճառուի խմբագրութեան ջով հատը 5 ՍԷՆ. թի սիայն:

ԼՈՅՍ ԵՒ ԽԱՒԱՐ

Գրեց

ՊԱՏ. Կ. ԲԱՐԱԿԵԱՆ

Կը վաճառուի Նիւ Եօրքի մէջ Խմբագրութեան, իսկ յՈւսթըր Հեղինակին ջով, հատը քսան և 4 ինգ ՍԷՆթի:

ԱՐՄԵՆԻԱ

Ա. ԶԱՏԱԿԱՆ ԿԻՍՍՇԱՍԵԱՐԱՆԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.,

ԵՒՆ. ԵՒՆ.

Տարեկան բաժանորդագիրն է չորս տոլար. Հասցէն,

Redaction du journal

Armenia,

Marseille, France

ԲԱԶՄԱՎԷՂ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Ամսաթերթ

ԽԹ. Տարի, 1891.

Տարեկան բաժանորդագիրն է տասը ֆր. (4 Բուրլի). Հասցէն՝

Redaction de la revue "Basmavep".

Venise, Italie, St.

ՀԱՆԴԷՍԱ ԱՄՍՈՐԵԱՅ

ԲԱՐՈՑԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄԵԱԿԱՆ,

ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ.

Ե. Տարի 1891.

Տարեկան բաժանորդագիրն է 10 ֆր. (4 Բուրլի). Հասցէն՝

Redaction de la Revue "Hantess",

Vienne, (Autriche).

VII Mechitaristengasse, 4.

ԱՐՄԷՆԻԱ

Հունգարերէն Ամսաթերթ.

ՊԱՏԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄԵԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ.

Բ. Տարի. 1891

Տարեկան բաժանորդագիրն է 10 ֆր. Հասցէն՝

Szongott Kristoff urnak,

Szamosujvar (Hongrie).